«ԳՀԱՊՁԲ-2019/15-6-ԵՊԲՀ» **ծածկագրով**
Գնանշման հարցման հրավերի

«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N «ԳՀԱՊՁԲ-2019/15-6-ԵՊԲՀ-3»

Հ.Հ. «___» «_____» _2019թ.

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամ-ը ի դեմս ռեկտոր՝ Արմեն Աբգարի Մուրադյան-ի, որը գործում է Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան Հիմնադրամ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Մեդիսար» ՍՊԸ-ը, ի դեմս տնօրեն Մանվել Գաբրիելյան-ի, որը գործում է «Մեդիսար» ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով,

ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է ***1162900 (մեկ միլիոն մեկ հարյուր վաթսուներկու հազար ինը) ՀՀ դրամ ներառյալ ԱԱԴ-ն:*** Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Սույն պայմանագրի մասով Վաճառողը Ապրանքի մատակարարումը իրականացնում է միանվագ կամ փուլային ըստ Գնորդի ներկայացրած պահանջի:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած

բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահման¬ված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանա¬գրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Գնորդի կողմից այն ստորագրելու պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված

մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Եթե պայմանագրի գործողության ընթացքում Գնորդի կողմից գնման առարկայի պահանջը ներկայացվել է ոչ ամբողջ խմբաքանակի համար,ապա գնման առարկայի չմատակարարված,մնացորդային խմբաքանակի մասով պայմանագիրը լուծվում է:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է **21 էջից**, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	**ՎԱՃԱՌՈՂ**
Երևանի Մխիթար Հերացու անվան	<<Մեդիսար>> ՍՊԸ
պետական բժշկական համալսարան	Հասցեն՝ ք.Երևան, Գետառի 4/9
Հիմնադրամ	Բանկ՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ
ք. Երևան, Կորյունի 2	Հ/Հ 2050022415811001
060 621 000	ՀՎՀՀ 02555635
Հայբիզնեսբանկ ՓԲԸ	Էլ.փոստ՝ sales@medisar.am
11500166513800	Տնօրեն՝ Մ. Գաբրիելյան
01503448	
Արմեն Աբգարի Մուրադյան	
---	_____
/ստորագրություն/	(ստորագրությունը)
Կ.Տ	Կ.Տ

Digitally signed by GABRIELYAN MANVEL 3507550326
Date: 2019.05.29 12:37:34 AMST

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Digitally signed by MURADYAN ARMEN 2007720078
Date: 2019.06.03 17:01:26 AMST

Հավելված N 1
« » « » 2019թ. կնքված
«ԳՀԱՊՁԲ-2019/15-6-ԵՊԲՀ-3» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Ապրանքի											
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	CPV կոդ	անվանումը եւ ապրանքային նշանը	արտադրողի անվանումը եւ ծագման երկիրը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	Մատակարարում		
									Հասցե	Ենթակա քանակը	Կատարման վերջնաժամկետը
5	33691167	Իմերսիոն յուղ / Иммерсионное масло	Минимед/ ՌԴ	Իմերսիոն յուղ: Անգույն, թափանցիկ, մածուցիկ հեղուկ: Ֆորմատ՝ 100մլ սրվակում: Նոր է, չօգտագործված: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն: Պահպանման պայմանները՝ պահել չոր տեղում:	հատ	1000	2000	2	*ք. Երևան Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեներով:*	2	*Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2019 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում*
10	33691173	Պոլիվալենտ շիգելյոզ շիճուկ (1-ին խառնուրդ) / Сыворотка адсорбированная к Shigella поливалентная для РА Flexneri I-VI sonnei	СПБНИИВС /ՌԴ	Պոլիվալենտ շիգելյոզ շիճուկ (1-ին խառնուրդ): Ֆորմատ՝ 2մգ փոշի սրվակում: Նոր է, չօգտագործված : Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն:	հատ	30000	120000	4	*ք. Երևան Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեներով:*	4	*Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2019 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում*

11	33691173	Պոլիվալենտ սալմոնելյոզային շիճուկ (3-րդ խառնուրդ) Сальмонеллезная адсорбированная поливалентная сыворотка для РА, О-групп АБСДЕ	СПБНИИВС /ՌԴ	Պոլիվալենտ սալմոնելյոզային շիճուկ (3-րդ խարնուրդ): Ֆորմատ՝ 2մգ փոշի սրվակում: Նոր է, չօգտագործված : Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն:	հատ	48000	144000	3	*ք. Երևան Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեներով:*	3	*Ապրանքի մատակարարում և իրականացվում է 2019 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում*
13	33691162	Թղթյա ինդիկատորային համակարգ / СИБ N2	ФГУП <<НПО<<Микроген>> / ՌԴ	Թղթյա ինդիկատորային դիսկեր միկրոօրգանիզմների ինդենտիֆիկացիայի համար /СИБ 2/: Ֆորմատ՝ 50 թեստ_ հետազոտության (12 սրվակներ СИБ_դիսկերով+2 փորձանոթ СИБ_զծիկներով)/հատ: Նոր է, չօգտագործված : Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն:	հատ	31000	31000	1	*ք. Երևան Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեներով:*	1	*Ապրանքի մատակարարում և իրականացվում է 2019 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում*
18	33141211	Ավտոմատ բաժանավորիչ 20-200 մկլ / Pipette 20-200ml	Գրիդմեդ /Չինաստան	Ավտոմատ բաժանավորիչ 20-200 մկլ: Ֆորմատ՝ հատ: Նոր է, չօգտագործված : Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն: Պահպանման պայմանները 15-25 ջերմաստիճան: Մատակարելիս որակի սերտիֆիկատի առկայությունը պարտադիր է:	հատ	12000	24000	2	*ք. Երևան Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեներով:*	2	*Ապրանքի մատակարարում և իրականացվում է 2019 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում*

19	33691156	Ավտոմատ բաժանավորիչ 100-1000 մկլ / Pipette 100-1000ml	Գրիդմեդ /Չինաստան	Ավտոմատ բաժանավորիչ 100-1000 մկլ: Ֆորմատ՝ հատ: Նոր է, չօգտագործված : Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն: Պահպանման պայմանները 15-25 ջերմաստիճան: Մատակարելիս որակի սերտիֆիկատի առկայությունը պարտադիր է:	հատ	12000	12000	1	*ք. Երևան Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեներով:*	1	*Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2019 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում*
21	33691421	Ազուր էոզին ըստ Ռոմոնովսկու / Азур-Эозин по Романовскому	Минимед/ ՌԴ	Ազուր էոզին ըստ Ռոմոնովսկու: Մուգ կապտավուն ներկող հեղուկ: Ֆորմատ՝ լիտր: Նոր է, չօգտագործված : Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն: Պահպանման	լիտր	4000	12000	3	*ք. Երևան Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեներով:*	3	*Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2019 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում*
24	33691156	Փորձանոթ ցենտրիֆուգայի նիշերով, ապակե / Пробирка центрифужная градуированная	Минимед/ ՌԴ	Փորձանոթ ցենտրիֆուգայի նիշերով, ապակե, 10մլ տարողությամբ : Ֆորմատ՝ հատ: Նոր է, չօգտագործված : Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն:	հատ	90	45000	500	*ք. Երևան Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեներով:*	500	*Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2019 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում*
44	33191310	Steryle swabs առանց միջավայրի փորձանոթ / Sterile swab stick	Գրիդմեդ /Չինաստան	Steryle swabs առանց միջավայրի փորձանոթ, պլաստմասե ձողիկով: Ֆորմատ՝ հատ: Նոր է, չօգտագործված : Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն:	հատ	25	200000	8000	*ք. Երևան Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեներով:*	8000	*Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2019 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20*

											օրացույցային օրվա ընթացքում
51	331412 11	Ավտոմատ բաժնավորի չի ծայրակալն եր 1000-5000 մկլ / Pipetka tips	Գրիդմեդ /Չինաստան	վտոմատ բաժնավորիչի ծայրակալներ 1000-5000 մկլ: Ֆորմատ՝ 1 հատ ծայրակալ: Նոր է, չօգտագործված : Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն: Պահպանման պայմանները 15-25 ջերմաստիճան:	հատ	30	30000	1000	*ք. Երևան Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեներ ով:*	1000	*Ապրանքի մատակարարում ն իրականացվում է 2019 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում*
53	331412 11	Պանչենկոյի պիպետկա ՌՕԷ / Пипетка РОЕ	Минимед/ ՌԴ	ՌՕԷ-ի պիպետ՝ ապակյա, Պանչենկոյի ապարատի համար, 10 նիշով, 18սմ երկարությամբ: Նոր է, չօգտագործված : Հանձնելու պահին պետք է ունենա ամբողջ պիտանելիության ժամկետի առնվազն 2/3-րդը:	հատ	100	50000	500	*ք. Երևան Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեներ ով:*	500	*Ապրանքի մատակարարում ն իրականացվում է 2019 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում*
55	331412 11	Գորյանի կամերա / Камера Горяева	Минимед/ ՌԴ	Գորյանի կամերա, որը նախատեսված է բջիջների հաշվարկի համար: Տարածությունը՝ 9մմ2: Խորությունը՝ 0,1մմ: Ծավալը՝ 0,9մմ3: Պարունակում է 225 խոշոր քառակուսիներ, /յուրաքանչյուրում 15 շարքով 15 մեծ քառակուսի/: ՈՒղղահայաց, հորիզոնական, խաչաձև և ոչ ուղղահայաց: Մեծ քառակուսիների մի մասը բաժանված են 16 փոքր քառակուսիների: Ֆորմատ՝ հատ: Նոր է, չօգտագործված : Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն:	հատ	6000	18000	3	*ք. Երևան Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեներ ով:*	3	*Ապրանքի մատակարարում ն իրականացվում է 2019 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում*

59	33691422	Կոնգո կարմիր / 0322.3	Carl Roth /Գերմանիա	Կոնգո կարմիր Congo Red /C32H22N6O6S2Na2/: Օգտագործվում է հյուսվածաբանական պրակտիկայում: Ֆորմատ՝ կիլոգրամ: Նոր է, չօգտագործված : Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն:	կգ	450000	45000	0.1	*ք. Երևան Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեներով:*	0.1	*Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2019 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում*
61	33691421	Հյուսվածքների ծածկման միջավայր, /05547539	VWR /Գերմանիա	Հյուսվածքների ծածկման միջավայր Coverquick: Մածուցիկ, անգույն, սուր հոտով, արագ չորացող հեղուկանման զանգված: Հյուսվածաբանական պատրաստուկների ծածկման համար: Ֆորմատ՝ լիտր: Նոր է, չօգտագործված : Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն:	լիտր	50000	250000	5	*ք. Երևան Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեներով:*	5	*Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2019 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում*
63	33691422	Նատրիումի հիդրոֆոսֆատ / Натрий гипофосфат	Химбаза / ՌԴ	Սպիտակ բյուրեղային փոշի, վերլուծությունների համար մաքուր, նատրիումի մոնոֆոսֆատի զանգվածային մասը 100%-ից ոչ պակաս, ոչ թունավոր: Ֆորմատ՝ կիլոգրամ: Փաթեթվածքը՝ապապակյա կամ պլաստմասե տարաներ: Նոր է, չօգտագործված : Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն:	կգ	1500	4500	3	*ք. Երևան Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեներով:*	3	*Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2019 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում*
64	33691422	Շիբ ալյումակալիումային / Алюмокалие вые квасцы	Химбаза / ՌԴ	Շիբ ալյումոկալիումային՝ Օգտագործվում է հյուսվածաբանական լաբորատորիայում: Ֆորմատ՝ կիլոգրամ: Նոր է, չօգտագործված : Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն:	կգ	1500	4500	3	*ք. Երևան Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեներով:*	3	*Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2019 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20*

											օրացույցային օրվա ընթացքում
68	15991700	Ֆիլտրի թուղթ / Бумага фильтровальная	Химбаза / ՌԴ	Սպիտակ, հիգրոսկոպիկ թուղթ լուծութների ֆիլտրման համար: Ֆորմատ՝ կիլոգրամ: Նոր է, չօգտագործված : Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն:	կգ	3000	6000	2	*ք. Երևան Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեներով:*	2	*Ապրանքի մատակարարում ն իրականացվում է 2019 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում*
71	33691421	Սառցային քացախաթթու / Уксусная кислота	Химбаза / ՌԴ	100% քացախաթթու (սառցային): Օգտագործվում է հյուսվածաբանական լաբորատորիայում: Ֆորմատ՝ լիտր: Նոր է, չօգտագործված : Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն:	լիտր	1000	2000	2	*ք. Երևան Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեներով:*	2	*Ապրանքի մատակարարում ն իրականացվում է 2019 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում*
72	33691421	Մեթանոլ / Метанол	Химбаза / ՌԴ	Թույլ սպիրտային հոտով, անգույն հեղուկ է, հալման ջերմաստիճանը՝ -97,88°C, եռմանը՝ 64,5°C, խտությունը՝ 792,4 կգ/մ (20°C): Մեթիլալկոհոլի գոլորշիները օդի հետ առաջացնում են պայթուցիկ խառնուրդներ (6,72-35,5 ծավալ %), որոնց բոցավառման ջերմաստիճանն է 15,6°C: Անսահման քանակներով լուծվում է ջրում և բազմաթիվ օրգանական լուծիչներում: Ունի միատոմ սպիրտների բոլոր հատկությունները: Ֆորմատ՝ լիտր: Նոր է, չօգտագործված : Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2	լիտր	2500	5000	2	*ք. Երևան Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեներով:*	2	*Ապրանքի մատակարարում ն իրականացվում է 2019 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում*

				առկայություն:							
74	33621642	Բորաթթու / Борная кислота	Stanchem / Թուրքիա	Անգույն, փայլուն, չնչին յուղային, սպիտակ բյուրեղային փոշի է, անհոտ: Ֆորմատ՝ կիլոգրամ: Նոր է, չօգտագործված : Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն: Պահպանման պայմանները՝ պահել չոր տեղում:	կգ	700	24500	35	*ք. Երևան Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեներով:*	35	*Ապրանքի մատակարարում ն իրականացվում է 2019 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում*
75	24321650	Գլիցերին / Глицерин	KH Chemicals / Մալազիա	Գլիցերին մաքուր անալիզի համար: Անգույն թափանցիկ թանձր հեղուկ: Զանգվածային մասը 99,3%-ից ոչ պակաս, խտությունը՝1,258-1,231գ/ամ3, հիդեհավտանգավոր է: Ֆորմատ՝ կիլոգրամ: Փաթեթվածքը՝ պոլիէթիլենային շշեր: Նոր է, չօգտագործված : Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն:	կգ	800	11200	14	*ք. Երևան Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեներով:*	14	*Ապրանքի մատակարարում ն իրականացվում է 2019 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում*
80	33691422	Նատրիումի քլորիդ քիմիապես մաքուր / Натрий хлористый ХЧ	Stanchem / Ավստրիա	Սպիտակ խորանարդաձև բյուրեղներ կամ սպիտակ բյուրեղական փոշի, անհոտ, աղային համով: Ֆորմատ՝ կիլոգրամ: Որակը՝ քիմիապես մաքուր(ՀՉ): Նոր է, չօգտագործված : Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն: Պահպանման պայմանները՝ պահել չոր տեղում:	կգ	777,78	14000	18	*ք. Երևան Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեներով:*	18	*Ապրանքի մատակարարում ն իրականացվում է 2019 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում*

84	33691422	Ադամանդե կանաչ / Бриллианто вый зеленый	Stanchem / Անգլիա	Կանաչա-ոսկեգույն գնդիկներ կամ ոսկեգույն -կանաչավուն փոշի: Լուծվում է ջրում, սպիրտում, քլորոֆորմում: Ֆորմատ՝ կիլոգրամ: Նոր է, չօգտագործված :Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն: Պահպանման պայմանները՝ պահել չոր տեղում:	կգ	20000	1200	0.06	*ք. Երևան Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեներով:*	0.06	*Ապրանքի մատակարարում ն իրականացվում է 2019 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում*
86	33691421	Ազոտական թթու խիտ / Азотная кислота	Chem-Lab / Բելգիա	Ազոտական թթուն սուր գրգռող հոտով, հեղձուցիչ, անգույն կամ թույլ դեղնավուն, թափանցիկ, օդում ծխացող հեղուկ է: Խիստ անկայուն և պայթունավտանգ նյութ է, ուժեղ միահիմն թթու: Մոլյար կոնցենտրացիան 63.012 մոլ/լ է, խտությունը՝ 1,5±0,01 գ/սմ³: Ազոտական թթվի հալման ջերմաստիճանն է՝ -44±1°C, եռման ջերմաստիճանը՝ 181±1 °C: Կախված թթվի լուծույթի կոնցենտրացիայից, օգտագործում են նոսր և խիտ թթուները: Ազոտական թթվի զանգվածային բաժինը՝ 70%-ից ոչ պակաս է, 75% և ավելի բարձր զանգվածային մասով կարող է պատրաստվել սպառողի պատվերով: Ֆորմատ՝ լիտր: Փաթեթվածքը՝ ապակյա, պոլիմերային կամ կվարցե շշերով: Նոր է, չօգտագործված :Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն:	լիտր	7000	105000	15	*ք. Երևան Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեներով:*	15	*Ապրանքի մատակարարում ն իրականացվում է 2019 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում*

88	24311128	Նատրիումի հիդրօքսիդ / Натрий гидроокись	Chlorpars /Իրան	Տեխնիկական կծու նատրիում թողարկվում է թեփուկանման սպիտակ գույնի զանգվածի ձևով 98,5% NaOH-ի զանգվածային մասով, սպիտակ գույնի հալված զանգված՝94,0% NaOH-ի զանգվածային մասով և անգույն կամ գունավորված հեուկ՝43,0%: Ֆորմատ՝ կիլոգրամ: Նոր է, չօգտագործված :Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն:	կգ	500	2000	4	*ք. Երևան Աբովյան 60 և/կամ Մուրացան 114 հասցեներով:*	4	*Ապրանքի մատակարարում ն իրականացվում է 2019 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում*

****Եթե պայմանագրի գործողության ընթացքում Պատվիրատուի կողմից գնման առարկայի պահանջը ներկայացվել է ոչ ամբողջ խմբաքանակի համար, ապա գնման առարկայի չմատակարարված, մնացորդային խմբաքանակի մասով պայմանագիրը լուծվում է:**

ԳՆՈՐԴ
Երևանի Մխիթար Հերացու անվան պետական
բժշկական համալսարան Հիմնադրամ
ք. Երևան, Կորյունի 2
060 621 000
Հայբիզնեսբանկ ՓԲԸ
11500166513800
01503448
Արմեն Աբգարի Մուրադյան

/ստորագրություն/
Կ.Տ

Digitally signed by MURADYAN ARMEN 2007720078
Date: 2019.06.03 17:00:19 AMST

ՎԱՃԱՌՈՂ
<<Մեդիսար>> ՍՊԸ
Հասցեն՝ ք.Երևան, Գետառի 4/9
Բանկ՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2050022415811001
ՀՎՀՀ 02555635
Էլ.փոստ՝ sales@medisar.am
Տնօրեն՝ Մ. Գաբրիելյան

_____
(ստորագրությունը)
Կ.Տ

Digitally signed by GABRIELYAN MANVEL 3507550326
Date: 2019.05.29 12:36:33 AMST

Հավելված N 2
« » « » 2019թ.. կնքված
«ԳՀԱՊՁԲ-2019/15-6-ԵՊԲՀ-3» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
5	33691167	Իմերսիոն յուղ	0	0	0	0	0	2000	2000	2000	2000	2000	2000	2000	**2000**
10	33691173	Պոլիվալենտ շիգելյոզ շիճուկ (1-ին խառնուրդ)	0	0	0	0	0	120000	120000	120000	120000	120000	120000	120000	**120000**
11	33691173	Պոլիվալենտ սալմոնելյոզային շիճուկ (3-րդ խառնուրդ)	0	0	0	0	0	144000	144000	144000	144000	144000	144000	144000	**144000**
13	33691162	Թղթյա ինդիկատորային համակարգ	0	0	0	0	0	31000	31000	31000	31000	31000	31000	31000	**31000**

18	33141211	Ավտոմատ բաժանավորիչ 20-200 մկլ	0	0	0	0	0	24000	24000	24000	24000	24000	24000	24000	**24000**
19	33691156	Ավտոմատ բաժանավորիչ 100-1000 մկլ	0	0	0	0	0	12000	12000	12000	12000	12000	12000	12000	**12000**
21	33691421	Ազուր էոզին ըստ Ռոմոնովսկու	0	0	0	0	0	12000	12000	12000	12000	12000	12000	12000	**12000**
24	33691156	Փորձանոթ ցենտրիֆուգայի նիշերով, ապակե	0	0	0	0	0	45000	45000	45000	45000	45000	45000	45000	**45000**
44	33191310	Steryle swabs առանց միջավայրի փորձանոթ	0	0	0	0	0	200000	200000	200000	200000	200000	200000	200000	**200000**
51	33141211	Ավտոմատ բաժնավորիչի ծայրակալներ 1000-5000 մկլ	0	0	0	0	0	30000	30000	30000	30000	30000	30000	30000	**30000**
53	33141211	Պանչենկոյի պիպետկա ՌՕԷ	0	0	0	0	0	50000	50000	50000	50000	50000	50000	50000	**50000**
55	33141211	Գորյաևի կամերա	0	0	0	0	0	18000	18000	18000	18000	18000	18000	18000	**18000**

59	33691422	Կոնգո կարմիր	0	0	0	0	0	45000	45000	45000	45000	45000	45000	45000	**45000**
61	33691421	Հյուսվածքների ծածկման միջավայր	0	0	0	0	0	250000	250000	250000	250000	250000	250000	250000	**250000**
63	33691422	Նատրիումի հիդրոֆոսֆատ	0	0	0	0	0	4500	4500	4500	4500	4500	4500	4500	**4500**
64	33691422	Շիբ ալյումակալիումային	0	0	0	0	0	4500	4500	4500	4500	4500	4500	4500	**4500**
68	15991700	Ֆիլտրի թուղթ	0	0	0	0	0	6000	6000	6000	6000	6000	6000	6000	**6000**
71	33691421	Սառցային քացախաթթու	0	0	0	0	0	2000	2000	2000	2000	2000	2000	2000	**2000**
72	33691421	Մեթանոլ	0	0	0	0	0	5000	5000	5000	5000	5000	5000	5000	**5000**
74	33621642	Բորաթթու	0	0	0	0	0	24500	24500	24500	24500	24500	24500	24500	**24500**

75	24321650	Գլիցերին	0	0	0	0	0	11200	11200	11200	11200	11200	11200	11200	**11200**
80	33691422	Նատրիումի քլորիդ քիմիապես մաքուր	0	0	0	0	0	14000	14000	14000	14000	14000	14000	14000	**14000**
84	33691422	Ադամանդե կանաչ	0	0	0	0	0	1200	1200	1200	1200	1200	1200	1200	**1200**
86	33691421	Ազոտական թթու խիտ	0	0	0	0	0	105000	105000	105000	105000	105000	105000	105000	**105000**
88	24311128	Նատրիումի հիդրօքսիդ	0	0	0	0	0	2000	2000	2000	2000	2000	2000	2000	**2000**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ԳՆՈՐԴ

Երևանի Մխիթար Հերացու անվան
պետական բժշկական համալսարան
Հիմնադրամ
ք. Երևան, Կորյունի 2
060 621 000
Հայբիզնեսբանկ ՓԲԸ 11500166513800
01503448
Արմեն Աբգարի Մուրադյան

/ստորագրություն/
Կ.Տ

Digitally signed by MURADYAN ARMEN 2007720078
Date: 2019.06.03 17:00:45 AMST

ՎԱՃԱՌՈՂ

<<Մեդիսար>> ՍՊԸ
Հասցեն՝ ք.Երևան, Գետառի 4/9
Բանկ՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2050022415811001
ՀՎՀՀ 02555635
Էլ.փոստ՝ sales@medisar.am
Տնօրեն՝ Մ. Գաբրիելյան

_____
(ստորագրությունը)
Կ.Տ

Digitally signed by GABRIELYAN MANVEL 3507550326
Date: 2019.05.29 12:38:46 AMST

Հավելված N 3
« » « » 2019թ. կնքված
«ԳՀԱՊՁԲ-2019/15-6-ԵՊԲՀ-3» ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
_
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները, կամ մատուցել է հետևյալ ծառայությունները, կամ մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների, կատարված աշխատանքների, մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » « » 2019թ. կնքված
«ԳՀԱՊՁԲ-2019/15-6-ԵՊԲՀ-3» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն